ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

02.03.2015Թ. ԹԻՎ 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 մարտի 2015թվականի N 08

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի.

Հրազդան քաղաքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

Հաստատել Հրազդան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 2-ի թիվ 02 հերթական նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1597-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծում փոփոխություն /մշակման/ նախագծման առաջադրանքին հավանություն տալու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
3. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
7. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ԱՄԵՆԱՏ
8. ՕՀԱՆՅԱՆ ԴԱՎԻԹԱՅԵԼ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ***ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 մարտի 2015թվականի N 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N1597-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ /ՄՇԱԿՄԱՆ/ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագրի շրջանակներում հասարակության և պետության կարիքների համար օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրության մասին» N599-Ն որոշումը և հիմք ընդունելով Հրազդանի քաղաքապետի առաջարկությունը.

Հրազդան քաղաքի ավագանին ***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծի մշակման /փոփոխման/ նախագծման առաջադրանքին:
2. Նախագծման առաջադրանքը կցվում է:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՎԱՀԵ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
3. ԻՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
7. ՓԻԼԻՓՈՍՅԱՆ ՄՍԵՔԱՍ
8. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ***ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ***

Հավելված
Հրազդան քաղաքի ավագանու
2015թվականի մարտի 02-ի
թիվ 09 որոշման

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ

1. Համայնքի հիմնական բնութագիրը

Համայնքի վարչական տարածքը՝	15343.72 հա
Բնակչության թիվը՝	57150 մարդ
Հողային ֆոնդի փաստացի բաշխումը, այդ թվում՝	
բնակավայրերի հողեր՝	1701.09 հա
այդ թվում՝	
բնակելի կառուցապատում՝	966.07 հա
հասարակական կառուցապատում՝	220.54 հա
խառը կառուցապատում՝	38.48 հա
ընդհանուր օգտագործման՝	212.00 հա
այլ հողեր՝	264.0 հա
գյուղատնտեսական նշանակության հողեր՝	11053.69 հա
այդ թվում՝	
վարելահող՝	3927.35 հա
խոտհարք՝	966.87 հա
արոտ՝	5318.93 հա
այլ հողեր՝	783.57 հա
արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝	428.19 հա
այդ թվում՝	
արդյունաբերության՝	220.30 հա
գյուղ. արտադրության՝	146.42 հա
պահեստարաններ՝	8.47 հա
ընդերքօգտագործման՝	53.00 հա
էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝	417.79 հա
այդ թվում՝	
էներգետիկայի՝	244.48 հա
կապի՝	1.81 հա

կոմունալ՝	34.15 հա
հատուկ պահպանվող տարածքներ՝	62.21 հա
այդ թվում՝	
պատմական և մշակութային՝	27.07 հա
հատուկ նշանակության տարածքներ՝	48.19 հա
անտառային տարածքներ՝	1430.01 հա
այդ թվում՝	
անտառ՝	739.10 հա
ջրային տարածքներ՝	202.55 հա
այդ թվում՝	
գետեր՝	47.93 հա
լճեր՝	22.23 հա
ջրանցքներ՝	28.76 հա
հիդրոտեխնիկական և ջրատնտ. այլ օբյեկտներ՝	2.73 հա

Հողային ֆոնդի ցուցանիշները բերված են 01.07.2014 թվականին հաստատված հողային հաշվեկշիռով և ենթակա են ճշգրտման օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները.

Համայնքի հեռանկարային զարգացումը նախատեսվում և կախված է զբոսաշրջության, սոցիալական, մշակութային, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի / այդ թվում վերականգնվող էներգետիկայի / կատարելագործման ուղղված ծրագրերի իրականացմամբ:

2.Համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները.

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին թիվ 1831-Ն որոշումը, համայնքին առնչվող պետական նշանակության այլ ծրագրեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ին «Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծը հաստատելու մասին» N610-Ն որոշումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի /բնակավայրի/ գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N1597-Ն որոշումը, համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 11-ի Հրազդան քաղաքի 2013-2016 թթ քառամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին, թիվ 08-Ն որոշումը:

4.Տեղեկատվություն համայնքում առկա էլեկտրային տվյալների վերաբերյալ.

Հրազդան քաղաքն ունի հաստատված գլխավոր հատակագիծը, հողերի կադաստրային քարտեզ և անշարժ գույքի կադաստրի հետ կապված այլ տվյալներ:

5.Նախագծի նպատակը.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի գլխավոր հատակագծում կատարվող փոփոխությունները պայմանավորված են «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագրի շրջանակներում Հրազդան-Շինուհայր 220 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային կառուցման նպատակով համայնքի վարչական տարածքում գտնվող որոշ հողատարածքների նպատակային նշանակության փոփոխությամբ:

Հրազդան-Շինուհայր 220ԿՎ էլեկտրահաղորդման օդային գծի անցկացման համար համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերում նախատեսվում է առանձնացնել 21/քսանմեկ/ միավոր հողամասեր՝ թվով 21/քսանմեկ/ հենասյուները ըստ նախագծային լուծումների զբաղեցնելու են ընդամենը 0.68155 հեկտար համայնքային սեփականություն հանդիսացող հողեր, որից գյուղատնտեսական նշանակության այլ հողեր՝ 0.12800 հա, արոտավայրեր՝ 0.42941 հա, վարելահողեր՝ 0.04896 հա, արոտավայր-վարելահող՝ 0.04626 հա, բնակավայրերի նշանակության այլ հողեր՝ 0.02892 հա:

Նախագծով առաջարկվում է նշված հողամասերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա «էներգետիկայի օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ:

6.Նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող հիմնական պահանջները

Նախագծի բոլոր նյութերը նախապատրաստվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի մշակման , փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N208-Ն որոշումներին ուժը կորցրած ճանաչելու մասին» N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան:

Առաջադրանքը կազմեց՝
Հրազդանի քաղաքապետարանի աշխատակազմի
Քաղաքաշինության և տարածքային զարգացման բաժնի պետ՝ Մ.Գոստանյան